1. Հոգնած հոգիս հանգիստ գտավ
Կեսօրվա խիստ տոթին,
Խնձորենու տակ երբ մտավ
Սարոնի պարտեզում:
Մեղմիկ զեփյուռն երբ փայփայեց
Տոթակեզ իմ երես,
Քաղցր մրմունջով օրոր երգեց,
Քնեցի այնտեղ ես:

Սարոնի պարտեզում,
Այն երկնային վայրում,
Ուր ծաղիկներն սեր են բուրում,
Սարոնի պարտեզում:

2. Հոգուս տիրեց մի խինդ շատ մեծ
Պայծառ այն իրիկուն,
Երբ Նա սիրող բազուկն հպեց
Իմ թշվառ, խեղճ հոգուն:
Տեղի տվեց այնժամ խավարն
Սուրբ, կենաց պարզ լույսին,
Երբ բոցավառ Իր աչքերից
Հույս, լույս ինձ ցոլացին:

3. Մինչ ձախ ձեռքն էր գլխիս տակին,
Աջով Նա ինձ գրկեց,
Եվ բաբախեց սիրո հոգին,
Երբ կրծքին ինձ սեղմեց:
Նա ինձ, ինչպես կնիք անջինջ,
Դրոշմեց Իր Հոր սրտին,
Ուր սիրալիր բազկաց մեջ ջինջ
Ծնչեմ Իր սերն անգին:

4. Երբ Նա կյանքն ինձ բաշխեց, շատ մեծ
Ծնորհք, սեր թանկագին,
Զղջման արցունք, օ՛, շատ հեղեց
Վշտացյալ իմ հոգին:
Երբ Սուրբ սիրով Փրկիչը իմ
Ծոյեց ինձ քնքշորեն,
Սիրուն լինել հավատարիմ՝
Խոսք տվի մեղմորեն: